

"Արմենտել" փակ բաժնետիրական ընկերության կողմից հեռախոսակապի մատուցված ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման մասին

Բաժանորդի գրավոր դիմելու դեպքում «Արմենտել» ՓԲԸ-ն ամրակցված և (կամ) շարժական հեռախոսակապի մատուցած ծառայությունների վերաբերյալ տրամադրում է հետևյալ տեղեկությունները.

1. Դիմելու պահին նախորդող առնվազն մեկ տարվա ժամանակահատվածի համար բաժանորդի այն մուտքային և ելքային զանգերի ու կարճ հաղորդագրությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ, որոնք սակագրվել են և առաջացրել ծառայության վճար բաժանորդի համար:

2. Բջջային կապի հետվճարային համակարգի բաժանորդների ելքային և մուտքային զանգերի, կարճ հաղորդագրությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ (վերձանում)՝ մինչև դիմելու պահին նախորդող 5 (հինգ) տարվա (ելքային) և 3 (երեք) ամիս (մուտքային) ժամանակահատվածի համար:

Վերձանումը տրվում է ընթացիկ ամսին նախորդող ամսից սկսած:

Սակագինը կազմում է 700 դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

3. Բջջային կապի կանխավճարային համակարգի բաժանորդների ելքային և մուտքային զանգերի, կարճ հաղորդագրությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ՝ մինչև դիմելու պահին նախորդող 3 (երեք) տարվա ժամանակահատվածի համար:

Վերձանումը տրվում է ընթացիկ ամսին նախորդող ամսից սկսած:

Սակագինը կազմում է միանվագ 700 դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

4. Էլեկտրոնային փոստով, կայքի «Անձնական գրասենյակ»-ի միջոցով (my.beeline.am) կամ My Beeline Armenia բջջային հավելվածի միջոցով (app.beeline.am) հաշվի վերձանման տրամադրման սակագինը կազմում է 0 դրամ:

5. Ամրակցված ցանցի ելքային զանգերի (տեղական, միջազգային, միջբաղաքային, դեպի բջջային ցանց և այլ ծառայություններ) վերաբերյալ տեղեկատվություն՝ մինչև դիմելու պահին նախորդող մեկ տարի ժամանակահատվածի համար:

Տեղական ելքային զանգերի մեկ էջի սակագինը 10 դրամ է՝ ներառյալ ԱԱՀ:

Միջազգային, միջքաղաքային և դեպի հանրային շարժական բջջային կապի ցանցեր կատարած ելքային զանգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մեկ օրինակ յուրաքանչյուր հաշվարկային ժամանակաշրջանի համար անվճար է:

6. Բաժանորդին ամրակցված ցանցի մուտքային զանգերի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվում: